Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14.1/[109833]-12

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Մ. Հակոբյան	ՀՀ վարչապետի օգնական
Ռ. Թոփչյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Գ. Մարգարով	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Ս. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի առաջատար մասնագետ
Ս. Կարախանյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի վարչության ղեկավար

1. Հիմնադրամի 2011 թվականի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2011 թվականի տարեկան հաշվետվությունը և ֆինանսական աուդիտի արդյունքները:

2. Ընթացիկ հարցեր

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Ընդունել ի գիտություն «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանի հաղորդումն այն մասին, որ Եվրոպական որակի ապահովման կառույցների ցանցի դրամաշնորհի շրջանակներում 2012 թվականի մայիսի 3-5-ը նախատեսվում է փորձագետի այցը Հայաստան, որի ընթացքում առաջարկվում է նաև կազմակերպել հանդիպում՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ